

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-604-23.09.2014-ՊԻ-010/0) վերաբերյալ:

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը լրացնել 152.1-ին հոդվածով, որով առաջարկվում է քրեական պատասխանատվություն սահմանել նախընտրական քարոզչության ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման համար: «Վարչական ռեսուրսի օգտագործում» հասկացությունը, համաձայն օրենքի նախագծի 1-ին հոդվածի, ներառում է քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով վերադասի կողմից պետական կամ համայնքային ծառայողի վրա ճշում գործադրելը, պետական կամ համայնքային ծառայողի լիազորությունները թեկնածուներից մեկի օգտին ծառայեցնելը, ընտրական քարոզարշավի աշխատանքներում պետական կամ համայնքային ծառայողի ներգրավումը, քարոզչության նպատակով

պետական միջոցների օգտագործումը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և ընտրական հանձնաժողովների տեղակայման շինություններում նախընտրական շտաբների տեղակայումը:

Հարկ է նշել, որ օրենքի նախագծի 1-ին հոդվածում որպես հանցագործության սուբյեկտ է նշվում պետական կամ համայնքային ծառայողի վերադասը: Այդ առումով պարզ չէ «վերադաս» հասկացությունը: Այսպես՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանրային ծառայությունը ներառում է ինչպես պետական, այնպես էլ՝ համայնքային ծառայությունը: Միաժամանակ նույն օրենքով տրված չէ «պետական ծառայող» հասկացության սահմանումը, սակայն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված է, որ պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ: Ինչպես երևում է, «պետական ծառայություն» հասկացությունը չափազանց լայն ընդգրկում ունի, և գործնականում պետական ծառայողի համար կարող են գոյություն ունենալ տարբեր վերադասներ: Նման պայմաններում ակնհայտ է դառնում, որ իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջանալ տարակարծություններ՝ տվյալ հանցագործության սուբյեկտների շրջանակը որոշելիս: Մինչդեռ նշված հոդվածի դիսպոզիցիան բլանկետային է, այսինքն՝ հանցագործության տվյալ տեսակի համար կարող են պատասխանատվության ենթարկվել ֆիզիկական ոչ բոլոր մեղսունակ և օրենքով սահմանված տարիքի հասած անձինք, այլ միայն նրանք, ովքեր իրենց աշխատանքի բնույթին կամ զբաղեցրած պաշտոնին համապատասխան կատարում են հատուկ պարտականություններ: Հետևաբար, արարքի որակման համար չափազանց կարևոր նշանակություն ունի հանցագործության սուբյեկտի՝ «վերադաս» հասկացության պարզաբանումը:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցակազմի պարագայում նույն «վերադասը» պետք է հանդես գա որպես սուբյեկտ դիսպոզիցիայում նշված բոլոր արարքների կատարման համար: Մինչդեռ նշված հոդվածում տարբեր արարքների միջև կապն ապահովելու համար օգտագործվում է «ինչպես նաև» շաղկապը: Այդ առումով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ: Ստացվում է, որ հոդվածի սկզբնական հատվածում նկարագրված սուբյեկտը չի կարող համարվել սուբյեկտ՝ «ինչպես նաև» արտահայտությունից հետո մատնանշված արարքի կատարման համար: Այսինքն՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով վերադասի կողմից պետական կամ համայնքային ծառայողի վրա ճնշում գործադրելու հանցակազմի սուբյեկտը չի կարող հանդիսանալ նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու ընտրական հանձնաժողովների տեղակայման շինություններում նախընտրական շտաբներ տեղակայելու հանցակազմի սուբյեկտ:

Բացի դրանից, խնդրո առարկա հոդվածում մատնանշված արարքներն իրենց էությամբ կա՛մ պաշտոնական լիազորությունների չարաշահում են, կա՛մ դրանց վերազանցում, որոնց պարագայում, եթե կատարված կոնկրետ արարքը ներառվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի դիսպոզիցիայի շրջանակներում, արարքը որակվում է հենց այդ հոդվածով: Հակառակ դեպքում կիրառելի են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն սահմանող իրավադրույթները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի

աշխատանքը խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսվանից մինչև մեկ տարի ժամկետով: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է ազատազրկում՝ երկուսից մինչև հինգ տարի ժամկետով՝ նույն արարքները պաշտոնական դիրքն օգտագործելով կատարելու համար: Հետևում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասն արդեն իսկ պատասխանատվություն է սահմանում (ընդ որում, ավելի խիստ, քան առաջարկվում է օրենքի նախագծի հեղինակի կողմից): Այլ հարց է, որ, եթե օրենքի նախագծի հեղինակը ցանկանում է ավելի մեղմ պատասխանատվություն սահմանել նախընտրական քարոզչության ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման համար, կարող է առանձնացնել նշված հանցակազմը՝ նշված նկատառումների հաշվառմամբ, սակայն ապահովելով առավել սպառիչ և հստակ ձևակերպումներ:

Ավելի քան երեք տասնյակ երկրների քրեական օրենսդրությունն ուսումնասիրելով՝ չի հաջողվել գտնել որևէ երկիր, որտեղ առկա կլինեք օրենքի նախագծով նախատեսված հանցակազմը:

2. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի կապակցությամբ հարկ ենք համարում տեղեկացնել, որ ներկայումս մշակման փուլում է գտնվում Ընտրական օրենսգրքի բարեփոխումների փաթեթը, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածում ևս փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանալու: Հետևաբար, հոդվածով ներկայացված առաջարկության ընդունման հնարավորությանը կարելի է անդրադառնալ նշված օրենսդրական փաթեթի քննարկումների շրջանակներում:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ

օրենքի նախագծի ընդունման դեպքում

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27¹ և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաօլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանվում է «վարչական եզրույթ» հասկացությունը, ինչպես նաև հստակեցվում են նախընտրական քարոզչության ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է նախընտրական քարոզչության ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման դեպքում քրեական պատասխանատվության սահմանմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Պ-604-23.09.2014-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) լրացնել նոր 152.1. հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 152.1. Վարչական ռեսուրսի օգտագործումը նախընտրական քարոզչության ժամանակ

Քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով վերադասի կողմից պետական կամ համայնքային ծառայողի վրա ճնշում գործադրելը, պետական կամ համայնքային ծառայողի լիազորությունները թեկնածուներից մեկի օգտին ծառայեցնելը, ընտրական քարոզարշավին պետական կամ համայնքային ծառայող ներգրավելը, քարոզչության նպատակով պետական միջոցներ օգտագործելը, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ ընտրական հանձնաժողովների տեղակայման շինություններում նախընտրական շտաբեր տեղակայելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 154² հոդվածի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Թեկնածուներից որեւէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով որեւէ թեկնածուից անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք կամ ընտրակաշառքի առաջարկ ստանալու դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մինչեւ ընտրակաշառք կամ ընտրակաշառքի առաջարկ ստանալու վերաբերյալ իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում կամովին հայտնել է իրավապահ մարմիններին եւ աջակցել հանցագործության բացահայտմանը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվող լրացումը եւ փոփոխությունը նպատակ ունեն ընտրական գործընթացը դարձնելու առավել արդար, ազատ եւ թափանցիկ: Առաջարկվող լրացումը եւ փոփոխությունը հիմնված է «2013թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի վրա: Նախագծով առաջարկվում է՝

1. Լրացնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) նոր 152.1 հոդվածով, որով սահմանվում է «վարչական ռեսուրս» եզրույթը:
2. Օրենսգրքի 154² հոդվածի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ ըստ որի ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդում ներկայացնողին ազատել քրեական պատասխանատվությունից:

Անդրադառնանք վերոնշյալ առաջարկություններից յուրաքանչյուրին առավել հանգամանորեն: Չնայած Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը արգելում է նախընտրական քարոզչություն իրականացնել եւ ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական եւ համայնքային ծառայողներին, ինչպես նաեւ ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմին իրենց լիազորություններն իրականացնելիս, այնուամենայնիվ 2012թ. խորհրդարանական ու 2008թ. եւ 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում գրանցվեցին վարչական ռեսուրսի օգտագործման բազմաթիվ դեպքեր, ինչպիսիք են՝ վերադասների կողմից պետական ծառայողների վրա ճնշման գործադրումը՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով, պետական ծառայողների լիազորությունները թեկնածուներից մեկի օգտին ծառայեցնելը, նախընտրական շտաբերի տեղակայումը այն շինություններում, որտեղ նաեւ գտնվում են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, ընտրական հանձնաժողովները եւ այլն: Ընտրություններին մասնակցող բազմաթիվ թեկնածուներ հրապարակային ձեռով իրենց մտահոգություններն արտահայտեցին վարչական ռեսուրսի օգտագործման դեպքերի վերաբերյալ: Նշված խնդիրները արձանագրվել են Մարդու իրավունքների պաշտպանի 2012թ. խորհրդարանական ու 2008թ. եւ 2013թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ արտահերթ զեկույցներում: Վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ իրենց մտահոգություններն էին հայտնել նաեւ ընտրություններին հետեւող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Ըստ նրանց ներկայացրած զեկույցների՝ քարոզարշավի կանոնակարգումները չէին ապահովել բավարար պաշտպանություն վարչական ռեսուրսի չարաշահումից եւ չէին նպաստել պետության եւ իշխող կուսակցության միջեւ հստակ բաժանմանը: ԵԱՀԿ/ԺՄԻԳ երկարաժամկետ դիտորդները, մասնավորապես, փաստել էին վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի առկայություն հօգուտ գործող նախագահի: Հաշվի առնելով վարչական ռեսուրսի վերաբերյալ վերոգրյալը՝ ներկայացված նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը լրացնել նոր 152.1 հոդվածով՝ ըստ որի վարչական ռեսուրսը չարաշահողը պատժվում է տուգանքով՝

նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատագրվամբ՝ մեկից երկու տարի ժամկետով: Նախագծով ներկայացված մյուս առաջարկը վերաբերում է ընտրակաշառք ստացող անձին պատասխանատվությունից ազատելուն, եթե, իհարկե, տվյալ անձը ընտրակաշառք ստանալու մասին 3 օրվա ընթացքում կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին: Համաձայն «2013թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի՝ 2012թ. խորհրդարանական եւ 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում ստացվել է ընտրակաշառքի բաժանման վերաբերյալ ավելի քան 200 ահազանգ (2013թ. նախագահական ընտրություններ՝ 100, 2012թ. խորհրդարանական ընտրություններ՝ 102): Ընտրակաշառքի բաժանման վերաբերյալ արատավոր պրակտիկայի վերացման նպատակով դեռեւս 2012թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումների առկայությունից ելնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը առաջարկել էր, որպես ընտրակաշառքի դեմ պայքարի արդյունավետ միջոց, օրենսդրությամբ նախատեսել դրույթ, ըստ որի ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդում ներկայացնողներն ազատվեն քրեական պատասխանատվությունից: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով կաշառք տվող անձի համար սահմանված է պատասխանատվություն, մինչդեռ կաշառք ստացողի պարագայում նման պատասխանատվությունը բացակայում է: Մասնավորապես քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե անձը կաշառք տալու մասին ոչ ուշ քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին: Հաշվի առնելով ընտրակաշառքի վերաբերյալ վերոգրյալը՝ ներկայացված նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 154² հոդվածի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ ըստ որի թեկնածուներից որեւէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով որեւէ թեկնածուից անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք կամ ընտրակաշառքի առաջարկ ստանալու դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ընտրակաշառք կամ ընտրակաշառքի առաջարկ ստանալու վերաբերյալ ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին: Կարծում ենք, որ ներկայացված Նախագիծը օրենքի ուժ ստանալու դեպքում կարող է նպաստել, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ընտրություններն այսուհետ, իրապես, լինեն արդար, թափանցիկ եւ ազատ: